«Չորագետ Հիդրո» ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	100%	100%

21. Դուստր կազմակերպության ձեռքբերում

2016թ. հոկտեմբերի 11-ին Խումբը ձեռք է բերել վերահսկողություն «Չորագետ Հիդրո» ՍՊԸ-ի նկատմամբ՝ գնելով ընկերության բաժնետոմսերի և քվեարկելու իրավունք տվող բաժնեմասերի 100%-ը՝ 4,744,950 հազար դրամով:

22. Պայմանական դեպքեր

(ա) Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, դեռ չեն կիրառվում Հայաստանի Հանրապետությունում: Խումբն ամբողջովին չի ապահովագրել իր հիմնական միջոցները և սարքավորումները, այն ապահովագրված չէ մահ գործունեության ընդհատումից և երրորդ կողմերի նկատմամբ պարտավորություններից, որոնք կարող են առաջանալ գույքին կամ շրջակա միջավայրին վնաս հասցնելուց՝ Խմբի տարածքում տեղի ունեցած պատահարների կամ վերջինիս գործունեության հետևանքով: Քանի դեռ Խումբը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է զգալի անբարենպաստ ազդեցություն ունենալ Խմբի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

(բ) Դատական վարույթներ

Խումբը ներգրավված չէ այնպիսի դատական վարույթներում, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ Խմբի համախմբված ֆինանսական վիճակի վրա:

(գ) Հարկային պարտավորվածություններ

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է և բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատավճիռների հաճախակի փոփոխություններով, որոնք հաճախ հստակ չեն, հակասական են և տարբեր կերպ են մեկնաբանվում տարբեր հարկային մարմինների կողմից: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն սահմանել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

Այս հանգամանքները Հայաստանի Հանրապետությունում կարող են այլ երկրների համեմատությամբ ավելի էական հարկային ռիսկ առաջացնել: Դեկլարությունը գտնում է, որ համապատասխանորեն է գնահատել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի Հանրապետության գործող հարկային օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատավճիռների իր մեկնաբանությունների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են լինել էական այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

23. Կապակցված կողմեր

(ա) Մայր կազմակերպություն և վերջնական վերահսկող կողմ

Խմբի անմիջական մայր կազմակերպությունը «Տաշիր Կապիտալ» ՓԲԸ-ն է: Խմբի վերջնական վերահսկող անձն է հանդիսանում պրն. Սամվել Կարապետյանը:

(բ) Գործարքներ առանցքային ղեկավար անձնակազմի հետ

(i) Առանցքային ղեկավար անձնակազմի վարձատրությունը

Տարվա ընթացքում առանցքային ղեկավար անձնակազմը ստացել է ստորև ներկայացված վարձատրությունը, որը ներառված է «Աշխատակազմի գծով ծախսեր» հոդվածում:

հազ. դրամ	2017թ.	2016թ.
Աշխատավարձ և պարգևավճարներ	215,340	367,889

(գ) Գործարքներ այլ կապակցված կողմերի հետ

հազ. դրամ	Գործարքի արժեքը դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար		Մնացորդը առ 31 դեկտեմբերի	
	2017թ.	2016թ.	2017թ.	2016թ.
Ապրանքների և ծառայությունների վաճառք				
Մայր կազմակերպության այլ դուստր կազմակերպություններ	15,281,429	18,757,242	1,706,256	3,351,270
Այլ կապակցված կողմ	-	-	-	-
Ապրանքների և ծառայությունների ձեռքբերում				
Մայր կազմակերպության այլ դուստր կազմակերպություններ	196,976	233,803	23,087	34,997
Տրամադրված փոխառություններ				
Մայր կազմակերպության այլ դուստր կազմակերպություններ	-	-	-	-
Այլ կապակցված կողմ	2,170,629	2,077,746	7,919,111	6,445,765
Տոկոսային եկամուտ				
Մայր կազմակերպության այլ դուստր կազմակերպություններ	-	223,207	-	-
Այլ կապակցված կողմ	316,033	428,662	6,890	293,600
Այլ				
Արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերին վճարված շահաբաժիններ	117,085	-	-	-

24. Չափման հիմունքներ

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ հիմնական միջոցների, որոնք հաշվառվում են վերագնահատված արժեքով:

25. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն այս համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար Խմբի անդամ ընկերությունների կողմից:

(ա) Համախմբման հիմունքներ

(i) *Ձեռնարկատիրական գործունեության միավորումներ*

Ձեռնարկատիրական գործունեության միավորումները հաշվառվում են կիրառելով ձեռքբերման մեթոդը՝ ձեռքբերման ամսաթվի դրությամբ, որն այն ամսաթիվն է, երբ վերահսկողությունը փոխանցվում է Խմբին:

Խումբը գոյվիլի չափումն իրականացնում է ձեռքբերման ամսաթվին որպես՝

- փոխանցված հատուցման իրական արժեք, գումարած
- ձեռքբերվող կազմակերպությունում չվերահսկվող բաժնեմասերի ճանաչված գումարը, գումարած
- ձեռնարկատիրական գործունեության փուլային ձեռքբերման դեպքում՝ ձեռքբերվող կազմակերպությունում նախկինում գոյություն ունեցող բաժնեմասը, հանած
- ձեռքբերված որոշելի ակտիվների և ստանձնած պարտավորությունների զուտ ճանաչված գումարը (որպես կանոն՝ իրական արժեքը):

Երբ տարբերությունը բացասական է, գեղչով ձեռքբերման գծով շահույթը ճանաչվում է անմիջապես շահույթում կամ վնասում:

Փոխանցված հատուցումը չի ներառում նախկինում գոյություն ունեցած հարաբերությունների մարմանը վերաբերող գումարները: Նման գումարները որպես կանոն ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Գործարքի հետ կապված ծախսերը, բացառությամբ պարտքային կամ բաժնային արժեթղթերի թողարկման հետ կապված ծախսերի, որոնք Խումբը կրում է ձեռնարկատիրական գործունեության միավորման հետ կապված, ծախսագրվում են կատարվելու ժամանակ:

(ii) *Չվերահսկվող բաժնեմաս*

Չվերահսկվող բաժնեմասերը չափվում են ձեռք բերվող կազմակերպության որոշելի զուտ ակտիվներում չվերահսկող բաժնեմասի համամասնությամբ ձեռքբերման ամսաթվի դրությամբ:

(iii) Դուստր կազմակերպություններ

Դուստր կազմակերպությունները Խմբի կողմից վերահսկվող ընկերություններ են: Դուստր կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունները ներառվում են համախմբված ֆինանսական հաշվետվություններում՝ վերահսկումը սկսելու պահից մինչև վերահսկման դադարեցումը: Դուստր կազմակերպությունների կողմից կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականությունում անհրաժեշտության դեպքում կատարվում են փոփոխություններ՝ Խմբի կողմից ընդունված քաղաքականության հետ համապատասխանությունն ապահովելու նպատակով: Դուստր կազմակերպությունում չվերահսկվող բաժնեմասերի նկատմամբ կիրառելի վնասը բաշխվում է չվերահսկվող բաժնեմասերին նույնիսկ եթե դրա արդյունքում չվերահսկվող բաժնեմասերի մնացորդը դառնում է բացասական:

(iv) Համախմբման ընթացքում բացառվող գործառնություններ

Ներխմբային հաշվարկների մնացորդներն ու գործառնությունները, ինչպես նաև ներխմբային գործառնություններից առաջացող ցանկացած չիրացված եկամուտները և ծախսերը բացառվում են:

(v) Ակտիվների խմբի ձեռքբերում

Եթե Խումբը ձեռք է բերում ակտիվ կամ ակտիվների խումբ, ներառյալ՝ ստանձնած պարտավորությունները, որոնք չեն կազմում ձեռնարկատիրական գործունեություն, ապա նման գործառնությունները հաշվառվում են որպես ակտիվի ձեռքբերման գործառնություններ, որոնց շրջանակներում ձեռքբերման արժեքը բաշխվում է խմբի կազմի մեջ մտնող առանձին որոշելի ակտիվների և պարտավորությունների վրա՝ ձեռքբերման ամսաթվի դրությամբ դրանց իրական արժեքներին համամասնորեն: Ձեռնարկատիրական գործունեությունը գործունեությունների և ակտիվների փոխկապակցված ամբողջություն է, որը կարելի է իրականացնել և կառավարել՝ ուղղակիորեն ներդրողներին (կամ այլ սեփականատերերին, անդամներին կամ մասնակիցներին) շահաբաժինների, ծախսումների տնտեսման կամ այլ տնտեսական օգուտների տեսքով հատույց ապահովելու նպատակով:

(բ) Հասույթ

Հասույթը ճանաչվում է համոզիչ վկայության առկայության դեպքում՝ սովորաբար վաճառքի իրագործված պայմանագրի տեսքով, համաձայն որի գնորդին են փոխանցվել ապրանքների սեփականության հետ կապված ռիսկերի և հատույցների նշանակալի մասը, հատուցման ստացումը հավանական է, հնարավոր է արժանահավատորեն չափել գործարքի հետ կապված ծախսերը, չի դիտվում շարունակական մասնակցություն ապրանքների կառավարմանը և հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը: Հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով՝ առանց վերադարձումների, առևտրային զեղչերի և իջեցումների:

Էլեկտրաէներգիայի վաճառքից ստացվող հասույթը ճանաչվում է օգտագործված էլեկտրաէներգիայի չափված ծավալների հիման վրա: Հզորության վաճառքից ստացվող հասույթը ճանաչվում է տրամադրված հզորության ծավալների հիման վրա:

(գ) Ֆինանսական եկամուտ և ծախս

Խմբի ֆինանսական եկամուտը և ֆինանսական ծախսերը ներառում են.

- տոկոսային եկամուտը
- տոկոսային ծախսը,
- փոխարժեքային տարբերություններից առաջացող շահույթը կամ վնասը ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների գծով:

Տոկոսային եկամուտը և ծախսը ճանաչվում են կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Փոխարժեքային տարբերություններից առաջացող շահույթը և վնասը ներկայացվում են զուտ հիմունքով որպես ֆինանսական եկամուտ կամ ֆինանսական ծախս՝ կախված այն հանգամանքից, թե որ դիրքում է կատարվում արտարժույթի շարժը՝ զուտ շահույթի, թե՛ զուտ վնասի:

(դ) Արտարժույթ

(i) Արտարժույթով գործարքներ

Արտարժույթով իրականացվող գործարքները փոխարկվում են Խմբի ֆունկցիոնալ արժույթի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով:

Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են Խմբի ֆունկցիոնալ արժույթի այդ օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Դրամային միավորների գծով արտարժույթով իրականացված գործարքներից շահույթը կամ վնասը հանդիսանում է հաշվետու տարվա սկզբի դրությամբ ֆունկցիոնալ արժույթով արտահայտված, արդյունավետ տոկոսադրույքով և ժամանակաշրջանի ընթացքում վճարումներով ճշգրտված ամորտիզացված արժեքի և արտարժույթով արտահայտված ու հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ գործող փոխարժեքով փոխարկված ամորտիզացված արժեքի տարբերությունը:

Արտարժույթի փոխարկումից առաջացող տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում:

(ե) Աշխատակիցների հատուցումներ

(i) Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով պարտականությունները չափվում են առանց զեղչման և ծախսագրվում են համապատասխան ծառայությունը մատուցելուց հետո: Պարտավորությունը ճանաչվում է այն գումարի չափով, որն ակնկալվում է վճարել որպես կարճաժամկետ դրամական միջոցների տեսքով պարգևավճար, եթե Խումբն ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն այդ գումարը վճարել որպես անցյալ ծառայության արդյունք կամ կարող է արժանահավատորեն գնահատել պարտականությունը:

(գ) Շահութահարկ

Շահութահարկի գծով ծախսը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Այն ճանաչվում է շահութուն կամ վնասում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է ձեռնարկատիրական գործունեության միավորումներին կամ ուղղակիորեն սեփական կապիտալում կամ այլ համապարփակ եկամտում ճանաչված տարրերին:

(i) Ընթացիկ հարկ

Ընթացիկ հարկը տարվա հարկվող շահույթի կամ վնասի գծով հարկի վճարվելիք կամ ստացվելիք գումարն է, որը հաշվարկվում է կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ և ներառում է նախորդ տարիների վճարման ենթակա հարկերի գծով կատարված ճշգրտումները: Վճարվելիք ընթացիկ հարկը ներառում է նաև շահաբաժինների գծով առաջացող հարկային պարտավորությունները:

(ii) Հետաձգված հարկ

Հետաձգված հարկը ճանաչվում է ֆինանսական հաշվետվությունների նպատակների համար օգտագործվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակների համար օգտագործվող գումարների միջև ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկը չի ճանաչվում

- այն ժամանակավոր տարբերությունների համար, որոնք առաջանում են ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչման հետ կապված այն գործարքում, որը չի հանդիսանում ձեռնարկատիրական գործունեության միավորում և որը ազդեցություն չունի հաշվապահական կամ հարկվող շահույթի կամ վնասի վրա,
- այն ժամանակավոր տարբերությունների համար, որոնք վերաբերում են դուստր կազմակերպություններում կատարած ներդրումներին, այնքանով որքանով Խումբն ի վիճակի է վերահսկել ժամանակավոր տարբերությունների հակադարձման ժամկետները և հավանական է, որ դրանք չեն հակադարձվի մոտ ապագայում,
- այն ժամանակավոր տարբերությունների համար, որոնք առաջանում են գույքիլի սկզբնական ճանաչման հետ կապված:

Հետաձգված հարկային ակտիվը ճանաչվում է չօգտագործված հարկային վնասների, չօգտագործված հարկային արտոնությունների և նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով, այն չափով, որքանով հավանական է, որ առկա կլինի հարկվող շահույթ, որի դիմաց դրանք կարող են օգտագործվել: Հետաձգված հարկային ակտիվները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և նվազեցվում են այնքանով, որքանով հավանական չէ, որ հարկային օգուտը կիրացվի:

Հետաձգված հարկային ակտիվը ճանաչվում է չօգտագործված հարկային վնասների, հարկային արտոնությունների և նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով այն չափով, որքանով հավանական է, որ առկա կլինի հարկվող շահույթ, որի դիմաց դրանք կարող են օգտագործվել: Հետաձգված հարկային ակտիվները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և նվազեցվում են այնքանով, որքանով հավանական չէ, որ հարկային օգուտը կիրացվի:

Հետաձգված հարկի գումարը չափվում է՝ կիրառելով հարկի այն դրույքները, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջիններս հակադարձելիս՝ հիմք ընդունելով այն օրենքների դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Հետաձգված հարկի չափումն արտացոլում է այն հարկային հետևանքները, որոնք կարող են առաջանալ, եթե Խումբը կիրառի այն մոտեցումը, որով ակնկալում է վերականգնել կամ մարել իր ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքը հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են, եթե Խումբն ունի ընթացիկ հարկային ակտիվներն ընթացիկ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք և հետաձգված հարկային ակտիվներն ու հետաձգված հարկային պարտավորությունները վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից նույն հարկատուից կամ տարբեր հարկատուներից, սակայն Խումբը մտադիր է հարկային պարտավորությունները մարել և հարկային ակտիվներն իրացնել զուտ հիմունքով կամ միաժամանակ իրացնել հարկային ակտիվներն ու մարել հարկային պարտավորությունները:

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրության համաձայն՝ Խմբի կազմի մեջ մտնող ընկերության հարկային վնասները և ընթացիկ հարկային ակտիվները չեն կարող հաշվանցվել Խմբի այլ ընկերությունների հարկվող շահույթի և ընթացիկ հարկային պարտավորությունների հետ: Բացի այդ, հարկման բազան որոշվում է առանձին հիմունքով Խմբի հիմնական գործունեության յուրաքանչյուր տեսակի համար և, այդ իսկ պատճառով, գործունեության տարբեր տեսակներին վերաբերող հարկային վնասը և հարկվող շահույթը չեն կարող հաշվանցվել:

Ընթացիկ և հետաձգված հարկի գումարը որոշելիս՝ Խումբը հաշվի է առնում անորոշ հարկային դիրքերի ազդեցությունը և վճարման ենթակա լրացուցիչ հարկերի, տուգանքների և ժամկետանց վճարումների գծով հաշվեգրված տոկոսների առկայության հանգամանքը: Խումբը գտնում է, որ հարկային պարտավորությունների գծով հաշվեգրումները բավարար են բոլոր չստուգված հարկային տարիների համար՝ հիմք ընդունելով բազմաթիվ գործոնների իր գնահատականը՝ այդ թվում հարկային օրենսդրության մեկնաբանությունները և նախկին տարիների փորձը: Այս գնահատականը հիմնված է գնահատումների և ենթադրությունների վրա և կարող է ներառել մի շարք դատողություններ ապագա իրադարձությունների վերաբերյալ: Կարող է ի հայտ գալ նոր տեղեկատվություն, որը կարող է ստիպել Խմբին փոխել իր դիրքորոշումը գոյություն ունեցող հարկային պարտավորությունների բավարար լինելու մասին: Հարկային պարտավորությունների նման փոփոխություններն ազդեցություն կունենան հարկային ծախսերի վրա այն ժամանակաշրջանում, որում կատարվել է նման գնահատումը:

(Է) Պաշարներ

Պաշարները ներկայացված են սկզբնական արժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Պաշարների սկզբնական արժեքը հաշվարկվում է «առաջինը մուտք, առաջինը ելք» սկզբունքով և ներառում է պաշարների ձեռք բերման ծախսերը, արտադրական կամ փոխարկման ծախսերը և դրանք ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված այլ ծախսեր: Արտադրված պաշարների և անավարտ արտադրանքի դեպքում սկզբնական արժեքը ներառում է արտադրական վերադիր ծախսումների համապատասխան մասը՝ հիմք ընդունելով արտադրական նորմատիվային հզորությունը:

Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի գնահատված գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար գնահատված ծախսումները:

(ը) Հիմնական միջոցներ

(i) Ճանաչում և չափում

Հիմնական միջոցների միավորները չափվում են վերագնահատված արժեքով՝ հանած հետագայում կուտակված մաշվածությունը և կուտակված արժեզրկումից կորուստները: Վերագնահատումներն իրականացվում են բավարար պարբերականությամբ, որպեսզի հաշվեկշռային արժեքը էականորեն չտարբերվի հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ իրական արժեքից:

Եթե ակտիվների հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով աճում է, աճը ճանաչվում է որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունք: Սակայն եթե այդ աճը վերականգնում է նույն ակտիվի շահույթում կամ վնասում ճանաչված նախկին վերագնահատումների արդյունքում առաջացած նվազումը, ապա այն ճանաչվում է շահույթում կամ վնասում: Եթե ակտիվի հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով նվազում է, նվազումը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ առկա է պարտքային մնացորդ վերագնահատման պահուստում:

Երբ հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, այդ բաղկացուցիչները հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ (հիմնական բաղկացուցիչներ):

Հիմնական միջոցի միավորի օտարումից ստացված շահույթը և վնասը որոշվում են համեմատելով օտարումից ստացված մուտքերը հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքի հետ և ճանաչվում են գուտ հիմունքով «Այլ եկամուտ/Այլ ծախս» հոդվածում՝ շահույթում կամ վնասում: Վերագնահատված ակտիվի վաճառքի դեպքում վերագնահատման պահուստում որպես վերագնահատումից աճ ներառված գումարը փոխանցվում է չբաշխված շահույթ:

(ii) Հետագա ծախսումներ

Հետագա ծախսումները կապիտալացվում են, երբ հավանական է, որ Խումբ կհոսեն այդ ծախսումների հետ կապված ապագա տնտեսական օգուտները:

Հիմնական միջոցների ամենօրյա սպասարկման ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ առաջանալուն պես:

(iii) Մաշվածություն

Հիմնական միջոցների միավորների մաշվածության հաշվարկը սկսվում է դրանց տեղադրման և շահագործման հանձնելու պահից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններիս կառուցումն ավարտելու և շահագործման հանձնելու պահից:

Հիմնական միջոցների բոլոր միավորների մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցների յուրաքանչյուր մասի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, քանի որ այս մեթոդն առավել ճիշտ է արտացոլում ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտների օգտագործման մոդելը: Հոդատարածքի գծով մաշվածություն չի հաշվարկվում:

Ստորև ներկայացված են հիմնական միջոցների էական միավորների օգտակար ծառայության գնահատված ժամկետներն ընթացիկ և համադրելի ժամանակաշրջանների համար.

- Շենքեր 5-ից 80 տարի,
- Շինություններ և մեխանիզմներ 5-ից 50 տարի;
- Մեքենասարքավորումներ 3-ից 7 տարի:

Մաշվածության հաշվարկի մեթոդները, օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և անհրաժեշտության դեպքում՝ ճշգրտվում:

(թ) Ոչ նյութական ակտիվներ

(i) Գույքիլի

Գույքիլի, որն առաջանում է դուստր կազմակերպությունների ձեռքբերման արդյունքում, չափվում է սկզբնական արժեքով՝ հանած կուտակված արժեզրկումից կորուստները:

(ii) Լիցենզիա և այլ ոչ նյութական ակտիվներ

Լիցենզիան և Խմբի կողմից ձեռքբերված ոչ նյութական ակտիվները, որոնք ունեն օգտակար ծառայության սահմանափակ ժամկետ, չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և կուտակված արժեզրկումից կորուստները:

(iii) Հետագա ծախսումներ

Հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ ավելացնում են այն առանձին ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտները, որին վերաբերում են: Բոլոր այլ ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ առաջանալուն պես:

(iv) Ամորտիզացի

Ամորտիզացիան հաշվարկվում է ակտիվի սկզբնական արժեքի գծով՝ հանած դրամացորդային արժեքը:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի (բացառությամբ գույքիլի) օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, քանի որ այս մեթոդն առավել ճիշտ է արտացոլում ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտների օգտագործման մոդելը:

Օգտակար ծառայության գնահատված ժամկետներն ընթացիկ և համադրելի ժամանակաշրջանների համար հետևյալն են.

- լիցենզիա 9 տարի,
- այլ ոչ նյութական ակտիվներ 3-ից 7 տարի:

Ամորտիզացիայի հաշվարկի մեթոդները, օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում և անհրաժեշտության դեպքում՝ ճշգրտվում:

(Ժ) Ֆինանսական գործիքներ

Խումբը դասում է ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվները փոխառությունների և դեբիտորական պարտքերի դասին:

Խումբը դասում է ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններն այլ ֆինանսական պարտավորությունների դասին:

(i) Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ - ճանաչում և ապաճանաչում

Խումբը փոխառությունները և դեբիտորական պարտքերը սկզբնապես ճանաչում է դրանց առաջացման օրը: Բոլոր այլ ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների սկզբնական ճանաչումը տեղի է ունենում առք ու վաճառքի օրը, երբ Խումբը դառնում է գործիքի պայմանագրային դրույթների կողմ:

Խումբը ապաճանաչում է ֆինանսական ակտիվը, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ փոխանցում է ֆինանսական ակտիվից դրամական հոսքերի ստացման պայմանագրային իրավունքները այնպիսի գործարքում, որում փոխանցվում են ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները: Մասնակցությունը փոխանցված ակտիվում, որն առաջացել կամ պահպանվել է Խմբի կողմից, ճանաչվում է որպես առանձին ակտիվ կամ պարտավորություն:

Խումբն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ պայմանագրում նշված պարտականությունը կատարվում է կամ չեղյալ է համարվում կամ ուժը կորցնում է:

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվելով զուտ գումարով, միայն այն դեպքում, երբ Խումբն ունի ճանաչված գումարները հաշվանցելու ներկայումս իրագործելի իրավաբանորեն ամրագրված իրավունք, ինչպես նաև հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն: Խումբն ունի հաշվանցում կատարելու ներկայումս իրագործելի իրավաբանորեն ամրագրված իրավունք, եթե այդ իրավունքը կախված չէ ապագա դեպքերից և իրագործելի է թե՛ բնականոն գործունեության և թե՛ Խմբի ու բոլոր պայմանագրային կողմերի կողմից պարտականությունների չկատարման, վերջիններիս լուծարման կամ սնանկացման դեպքում:

Փոխառություններ և դեբիտորական պարտքեր

Փոխառությունները և դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներն են, որոնք գնանշված չեն գործող շուկայում: Այս ակտիվների սկզբնական ճանաչումը տեղի է ունենում իրական արժեքով՝ գումարած ուղղակիորեն վերագրելի գործարքի հետ կապված ծախսումները: Սկզբնական ճանաչումից հետո փոխառությունները և դեբիտորական պարտքերը չափվում են ամորտիզացված արժեքով, կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ համաձայն արժեզրկումից կորուստները:

Փոխառություններ և դեբիտորական պարտքեր դասը ներառում է ֆինանսական ակտիվների հետևյալ դասերը՝ տրված փոխառությունները, առևտրական և այլ դեբիտորական պարտքերը և դրամական միջոցները և դրանց համարժեքները:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ են համարվում կանխիկ դրամական միջոցները և ընթացիկ բանկային հաշիվները:

(ii) Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ - չափում

Խումբը ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունները դասում է այլ ֆինանսական պարտավորությունների դասին: Նման ֆինանսական պարտավորությունների սկզբնական ճանաչումը տեղի է ունենում իրական արժեքով՝ հանած գործարքին ուղղակիորեն վերագրելի բոլոր ծախսերը: Սկզբնական ճանաչումից հետո այս ֆինանսական պարտավորությունները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Այլ ֆինանսական պարտավորությունները ներառում են վարկերը և փոխառությունները ու առևտրական և այլ կրեդիտորական պարտքերը:

(h) Բաժնետիրական կապիտալ

Սովորական բաժնետոմսեր

Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալ: Սովորական բաժնետոմսերի և բաժնետոմսերի օպցիոնների թողարկմանն ուղղակիորեն վերագրելի լրացուցիչ ծախսումները ճանաչվում են որպես սեփական կապիտալի նվազեցում՝ առանց հարկերի:

Արտոնյալ բաժնետոմսեր

Մարման ոչ ենթակա արտոնյալ բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալ, քանի որ դրանց գծով ենթակա են վճարման հայեցողական շահաբաժիններ, դրանք չեն պարունակում դրամական միջոցներ կամ այլ ֆինանսական ակտիվներ վճարելու որևէ պարտականություն և չեն պահանջում մարում Խմբի փոփոխական քանակությամբ բաժնային գործիքների միջոցով: Արտոնյալ բաժնետոմսերի գծով հայեցողական շահաբաժինները ճանաչվում են որպես սեփական կապիտալի բաշխումներ՝ Ընկերության բաժնետերերի հաստատմամբ:

(i) Արժեզրկում

(i) Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվը, որը չի չափվում իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով, գնահատվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ արժեզրկման անկողմնակալ վկայություն հայտնաբերելու նպատակով: Ֆինանսական ակտիվը համարվում է արժեզրկված, եթե անկողմնակալ վկայությունը ցույց է տալիս, որ ակտիվի սկզբնական ճանաչումից հետո տեղի է ունեցել կորստի դեպք, և այդ կորստի դեպքը բացասական ազդեցություն է ունեցել տվյալ ֆինանսական ակտիվի ապագա գնահատված դրամական հոսքերի վրա, որը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ֆինանսական ակտիվների արժեզրկման անկողմնակալ վկայությունը կարող է ներառել՝

- պարտականությունների չկատարումը կամ վճարումների հետաձգումը պարտապանի կողմից,
- Խմբին վճարվելիք գումարի պայմանների այնպիսի վերանայումը, որն Խումբն այլ հանգամանքներում չէր դիտարկի,

- պարտապանի կամ թողարկողի սնանկացման հայտանիշները,
- փոխառուների կամ թողարկողների վճարումների կարգավիճակի բացասական փոփոխությունները,
- տնտեսական պայմանները, որոնք կապված են պարտականությունների չկատարման հետ,
- ակտիվ շուկայի վերացումը,
- դիտարկելի տվյալները, որոնք վկայում են ֆինանսական ակտիվների խմբից ակնկալվող դրամական միջոցների հոսքերի չափելի նվազեցման մասին:

Անորոշիզացվող արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

Խումբն այս ակտիվները դիտարկում է արժեզրկման վկայության անհատական և հավաքական հիմունքներով: Բոլոր առանձին վերցված նշանակալի ակտիվները գնահատվում են արժեզրկման տեսանկյունից՝ անհատական հիմունքով: Արժեզրկման առանձին վկայություն չհայտնաբերելու դեպքում, այս ակտիվները գնահատվում են հավաքական հիմունքով՝ տեղի ունեցած, սակայն չբացահայտված արժեզրկման վկայություն հայտնաբերելու նպատակով: Ակտիվները, որոնք առանձին վերցված նշանակալի չեն, գնահատվում են արժեզրկման տեսանկյունից հավաքական հիմունքով՝ խմբավորելով ռիսկի համանման բնութագրերով ակտիվները:

Հավաքական արժեզրկումը գնահատելիս Խումբը դիտարկում է պարտականությունների չկատարման նախկինում առկա միտումները, մարումների ժամկետները, կրած վնասի գումարը, որոնք ճշգրտվում են հաշվի առնելով ղեկավարության կարծիքը, թե արդյոք ներկա տնտեսական և վարկավորման պայմանները թույլ են տալիս, որպեսզի փաստացի վնասն ավել կամ պակաս լինի նախկինում առկա միտումներով առաջարկվողներից:

Ֆինանսական ակտիվի գծով արժեզրկումից կորուստը հաշվարկվում է որպես ակտիվի հաշվեկշռային արժեքի և այդ ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով գեղջված դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերի ներկա արժեքի միջև տարբերություն: Կորստի գումարը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ պահուստային հաշվում: Եթե Խումբը գտնում է, որ չկա ակտիվը փոխհատուցելու իրատեսական հնարավորություն, համապատասխան գումարները դուրս են գրվում: Խումբը շարունակում է ճանաչել արժեզրկված ակտիվի գծով տոկոսները գեղջի ծախսագրման միջոցով: Եթե հետագայում տեղի ունեցած դեպքը հանգեցնում է արժեզրկումից կորստի գումարի նվազեցմանը և այդ նվազեցումը կարելի է անկողմնակալորեն վերագրել արժեզրկման ճանաչումից հետո տեղի ունեցած դեպքին, ապա արժեզրկումից կորստի գումարի նվազեցումը հակադարձվում է շահույթի կամ վնասի միջոցով:

(ii) Ոչ ֆինանսական ակտիվներ

Խմբի ոչ ֆինանսական ակտիվների, բացառությամբ պաշարների և հետաձգված հարկային ակտիվների, հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ որոշելու արդյոք առկա է որևէ հայտանիշ, ըստ որի ակտիվը կարող է արժեզրկված համարվել: Եթե որևէ այդպիսի հայտանիշ առկա է, ապա գնահատվում է ակտիվի փոխհատուցվող գումարը: Գույքիլի համար փոխհատուցվող գումարը գնահատվում է յուրաքանչյուր տարի նույն ժամանակ:

Արժեզրկման ստուգման նպատակով ակտիվները, որոնց արժեզրկումը հնարավոր չէ գնահատել անհատական հիմունքով, խմբավորվում են ակտիվների փոքրագույն խմբերի, որոնք շարունակական օգտագործման արդյունքում առաջացնում են այլ ակտիվներից կամ դրամաստեղծ միավորից մեծապես անկախ դրամական միջոցների ներհոսքեր: Գործառնական սեգմենտի վերին մակարդակի ստուգման շրջանակներում, գույքիլի

արժեզրկման ստուգման նպատակով՝ դրամաստեղծ միավորները, որոնց բաշխվել է գույքվիլը, միավորվում են այնպես, որպեսզի արժեզրկման ստուգման մակարդակն արտացոլի այն նվազագույն մակարդակը, որում ներքին կառավարման նպատակներով գույքվիլը ենթարկվում է մոնիտորինգի: Ձեռնարկատիրական գործունեության միավորման արդյունքում ձեռքբերված գույքվիլը բաշխվում է դրամաստեղծ միավորների այն խմբերին, որոնք ակնկալվում է, որ օգուտներ կստանան ձեռնարկատիրական գործունեության միավորման սիներգիաներից:

Խմբի կորպորատիվ ակտիվները դրամական միջոցների անկախ ներհոսքեր չեն առաջացնում և օգտագործվում են մեկից ավելի դրամաստեղծ միավորի կողմից: Կորպորատիվ ակտիվները բաշխվում են դրամաստեղծ միավորներին խելամիտ և հետևողական հիմունքով և ստուգվում են արժեզրկման տեսանկյունից որպես այն դրամաստեղծ միավորի արժեզրկման ստուգման մաս, որին բաշխվում են:

Ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարը որոշվում է որպես հետևյալ երկու մեծություններից առավելագույնը. օգտագործման արժեք և իրական արժեք՝ համաժամանաբար: Օգտագործման արժեքը գնահատելիս դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերը զեղչվում են՝ օգտագործելով մինչև հարկումը զեղչման այն դրույքը, որն արտացոլում է փողի ժամանակային արժեքի տվյալ շուկայի ներկա գնահատականը և այդ ակտիվին կամ դրամաստեղծ միավորին բնորոշ ռիսկերը:

Արժեզրկումից կորուստ ճանաչվում է, երբ ակտիվի կամ վերջինիս դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է դրա գնահատված փոխհատուցվող գումարը:

Դրամաստեղծ միավորների գծով ճանաչված արժեզրկումից կորուստները բաշխվում են՝ դրամաստեղծ միավորի կազմի մեջ մտնող ակտիվների հաշվեկշռային արժեքները հավասարաչափ հիմունքով նվազեցնելու համար:

Արժեզրկումից կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում: Դրամաստեղծ միավորների գծով ճանաչված արժեզրկումից կորուստները բաշխվում են՝ նախ դրամաստեղծ միավորին (միավորների խմբին) բաշխված ցանկացած գույքվիլի հաշվեկշռային արժեքը նվազեցնելու համար, այնուհետև՝ միավորի (միավորների խմբի) այլ ակտիվների հաշվեկշռային արժեքը համամասնորեն նվազեցնելու համար:

Գույքվիլի գծով ճանաչված արժեզրկումը չի հակադարձվում: Այլ ակտիվների հետ կապված նախորդ ժամանակաշրջաններում ճանաչված արժեզրկումից կորուստները գնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ բացահայտելու, թե առկա է արդյոք որևէ հայտանիշ, ըստ որի արժեզրկումից կորուստը հնարավոր է, որ այլևս գոյություն չունի կամ նվազել է: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է, եթե փոխվել են փոխհատուցվող գումարը որոշելու համար օգտագործվող գնահատումները: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որ ակտիվի հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլինի, առանց համապատասխան մաշվածության և ամորտիզացիայի, եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլինի:

(խ) Պահուստներ

Պահուստը ճանաչվում է, երբ Խումբը՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, ունի ընթացիկ իրավական կամ կառուցողական պարտավորություն, որը հնարավոր է արժանահավատորեն գնահատել, և հավանական է, որ այդ պարտավորությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Պահուստները որոշվում են ակնկալվող դրամական միջոցների ապագա հոսքերը զեղչելով հարկումից առաջ այն դրույքով, որն արտացոլում է տվյալ շուկայում փողի ժամանակային արժեքը և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերը: Ձեղչի գծով ծախսը ճանաչվում է որպես ֆինանսական ծախս:

26. Դեռևս չկիրառվող նոր ստանդարտներ և մեկնաբանություններ

Մի շարք նոր ստանդարտներ, այդ ստանդարտների փոփոխություններ և մեկնաբանություններ գործում են 2017թ. հունվարի 1-ից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար և չեն կիրառվել այս համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս: Խումբը մտադիր է կիրառել այդ ստանդարտները և դրանց փոփոխությունները, երբ վերջիններս մտնեն ուժի մեջ:

Ակնկալվում է, որ ստորև ներկայացված ստանդարտներն ազդեցություն կունենան Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա սկզբնական կիրառման ժամանակաշրջանում:

(ա) ՖՀՄՍ 9 «Ֆինանսական գործիքներ»

ՖՀՄՍ 9 «Ֆինանսական գործիքներ» ստանդարտը սահմանում է ֆինանսական ակտիվների, ֆինանսական պարտավորությունների և ոչ ֆինանսական միավորների առք ու վաճառքի որոշ պայմանագրերի ճանաչման ու չափման պահանջներ: Այս ստանդարտը փոխարինում է ՀՀՄՍ 39 «Ֆինանսական գործիքներ. ճանաչում և չափում» ստանդարտը:

(i) Դասակարգում – Ֆինանսական ակտիվներ

ՖՀՄՍ 9-ը ներառում է ֆինանսական ակտիվների դասակարգման և չափման նոր մոտեցում, որն արտացոլում է այն բիզնես մոդելը, որի շրջանակներում կառավարվում են ակտիվները, և այդ ֆինանսական ակտիվների հետ կապված դրամական միջոցների հոսքերի բնութագրերը:

ՖՀՄՍ 9-ը ներառում է ֆինանսական ակտիվների երեք հիմնական դասեր. ամորտիզացված արժեքով չափվող ակտիվներ, այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ակտիվներ և շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ակտիվներ: Ստանդարտի համաձայն՝ ՀՀՄՍ 39-ով սահմանված մինչև մարման ժամկետը պահվող ակտիվների, փոխառությունների և դեբիտորական պարտքերի և վաճառքի համար մատչելի ակտիվների դասերն այլևս չեն գործում:

ՖՀՄՍ 9-ի համաձայն՝ այն պայմանագրերում, որոնց հիմնական պայմանագրերը հանդիսանում են ֆինանսական ակտիվ այս ստանդարտի շրջանակներում, պարունակվող ածանցյալ գործիքները երբեք չեն առանձնացվում: Փոխարենը, ստանդարտի դասակարգման պահանջները կիրառվում են ամբողջությամբ վերցված հիբրիդային գործիքի նկատմամբ:

Առաջնորդվելով այս գնահատմամբ՝ Խումբը չի գտնում, որ դասակարգման նոր պահանջներն էական ազդեցություն կունենան առևտրական դեբիտորական պարտքերի հաշվառման վրա:

(ii) Արժեզրկում – Ֆինանսական ակտիվներ և պայմանագրային ակտիվներ

ՖՀՄՍ 9-ը փոխարինում է ՀՀՄՍ 39-ով սահմանված «կրած վնասի» մոդելը «սպասվող պարտքային վնասի» մոդելով: Նոր մոդելի կիրառումը պահանջում է էական դատողություններ այն մասին, թե ինչպես են տնտեսական գործոններն ազդում սպասվող պարտքային վնասի վրա, որը որոշվում է առաջացման հավանականության գնահատմամբ:

Արժեզրկման նոր մոդելը կկիրառվի ամորտիզացված արժեքով չափվող կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների նկատմամբ, բացառությամբ բաժնային գործիքներում ներդրումների, ինչպես նաև պայմանագրային ակտիվների նկատմամբ:

ՖՀՄՍ 9 համաձայն՝ վնասի գծով պահուստները կչափվեն հետևյալ հիմունքներից որևէ մեկով.

- 12 ամսվա ընթացքում սպասվող պարտքային վնաս. սա այն սպասվող պարտքային վնասն է, որն առաջանում է ֆինանսական գործիքների գծով պարտավորությունների չկատարման դեպքերի արդյունքում, որոնք հնարավոր են հաջորդ 12 ամիսների ընթացքում, և
- ողջ ժամկետի ընթացքում սպասվող պարտքային վնաս. սա այն սպասվող պարտքային վնասն է, որն առաջանում է պարտավորությունների չկատարման բոլոր հնարավոր դեպքերի արդյունքում, որոնք կարող են տեղի ունենալ ֆինանսական գործիքի ակնկալվող գործողության ողջ ժամկետի ընթացքում:

Ողջ ժամկետի ընթացքում սպասվող պարտքային վնասի չափումը կիրառվում է այն դեպքում, երբ հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական ակտիվի գծով պարտքային ռիսկն էականորեն ավելացել է սկզբնական ճանաչման պահից: Հակառակ դեպքում կիրառվում է 12 ամսվա ընթացքում սպասվող պարտքային վնասի չափումը: Խումբը կարող է որոշել, որ ֆինանսական ակտիվի գծով պարտքային ռիսկն էականորեն չի աճել, եթե ակտիվն ունի ցածր պարտքային ռիսկ հաշվետու ամսաթվի դրությամբ: Այնուամենայնիվ, ողջ ժամկետի ընթացքում սպասվող պարտքային վնասի չափումը միշտ կիրառվում է առևտրական դեբիտորական պարտքերի և մշանակալի ֆինանսական բաղադրիչ չապարտման կողմից պայմանագրերի գծով ակտիվների համար:

Խմբի գնահատմամբ ՖՀՄՍ 9-ով սահմանված արժեզկմանը վերաբերող պահանջների կիրառումը 2018թ. հունվարի 1-ի դրությամբ չի հանգեցնի լրացուցիչ էական արժեզրկումից կորուստների ճանաչմանը:

(iii) Դասակարգում – ֆինանսական պարտավորություններ

ՖՀՄՍ 9-ը զգալի չափով պահպանում է ՀՀՄՍ 39-ով սահմանված ֆինանսական պարտավորությունների դասակարգման պահանջները: Այնուամենայնիվ, ՀՀՄՍ 39-ի համաձայն այն ֆինանսական պարտավորությունների իրական արժեքի բոլոր փոփոխությունները, որոնք դասվում են շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող գործիքների դասին, ճանաչվում են շահույթում կամ վնասում, մինչդեռ ՖՀՄՍ 9-ի համաձայն, իրական արժեքի այս փոփոխությունները ընդհանուր առմամբ ներկայացվում են հետևյալ կերպ.

- պարտավորության գծով պարտքային ռիսկի փոփոխություններին վերագրելի իրական արժեքի փոփոխության գումարը ներկայացվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում, իսկ
- իրական արժեքի փոփոխության մնացած գումարը ներկայացվում է շահույթի կամ վնասի կազմում:

Խումբը չի նախատեսել որևէ ֆինանսական պարտավորություն շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող գործիքների դասին և չունի մնացած մտադրություն ներկա պահին: Խմբի գնահատմամբ ֆինանսական պարտավորությունների դասակարգումը 2018թ. հունվարի 1-ի դրությամբ էական ազդեցություն չի ունեն համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

(iv) Բացահայտումներ

ՖՀՄՍ 9-ի համաձայն կպահանջվեն մանրամասն նոր բացահայտումներ հատկապես հ պարտքային ռիսկի և սպասվող պարտքային վնասի հետ կապված: Գնահատման ընթացքում Խումբը կատարել է վերլուծություն նպատակ ունենալով բացահայտել բացակայող տեղեկատվությունը: Խումբը գտնվում է համակարգերի և վերահսկողության մեխանիզմների փոփոխությունների ներդրման գործընթացում, որոնք, Խմբի կարծիքով, անհրաժեշտ կլինեն պահանջվող տեղեկատվության առկայությունն ապահովելու համար:

(v) Անցումը նոր ստանդարտին

ՖՀՄՍ 9-ի կիրառման արդյունքում կատարվող հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություններն ընդհանուր առմամբ կկիրառվեն հետընթաց, բացառությամբ ստորև ներկայացված դեպքերի:

- Խումբը կօգտվի այն բացառությունից, որը թույլ է տալիս չվերահաշվարկել նախորդ ժամանակաշրջանների համադրելի տվյալները դասակարգման և չափման (ներառյալ՝ արժեզրկման) փոփոխությունների հետ կապված: ՖՀՄՍ 9-ի կիրառման արդյունքում առաջացող ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվեկշռային արժեքների տարբերություններն ընդհանուր առմամբ կճանաչվեն չբաշխված շահույթի և պահուստների կազմում 2018թ. հունվարի 1-ի դրությամբ:
- Սկզբնական կիրառման ամսաթվի դրությամբ գոյություն ունեցող փաստերից ու հանգամանքներից ելնելով՝ պետք է կատարվեն հետևյալ գնահատումները.
 - Որոշել այն բիզնես մոդելը, որի շրջանակներում պահվում է ֆինանսական ակտիվը:
 - Նախատեսել որոշ ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող կամ չեղյալ համարել նախկինում կատարված նման նախատեսումը:
 - Նախատեսել ակտիվային նպատակներով պահվող բաժնային գործիքներում կատարած որոշ ներդրումները որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող:

(բ) ՖՀՄՍ 15 «Հաճախորդների հետ կնքված պայմանագրերից ստացվող հասույթ»

ՖՀՄՍ 15 ստանդարտը սահմանում է համապարփակ հիմունքներ, որոշելու համար, թե որ հանգամանքներում, ինչ չափով և երբ պետք է ճանաչվի հասույթը: Ստանդարտը փոխարինում է հասույթի ճանաչման ներկայումս գործող ուղեցույցները, ներառյալ՝ ՀՀՄՍ 18 «Հասույթ», ՀՀՄՍ 11 «Կառուցման պայմանագրեր» և ՖՀՄՄԿ Մեկնաբանություն 13 «Հաճախորդի հավատարմության ծրագրեր» ուղեցույցները:

(i) Ծառայությունների մատուցում

Ընկերությունն արտադրում և վաճառում է էլեկտրաէներգիա: Եթե մեկ համաձայնագրի շրջանակներում ծառայությունները մատուցվում են տարբեր հաշվետու ժամանակաշրջաններում, հատուցումը բաշխվում է տարբեր ծառայությունների իրական արժեքին համամասնորեն: Ներկայումս հասույթը ճանաչվում է ավարտավածության աստիճանի մեթոդով:

ՖՀՄՍ 15-ի համաձայն՝ ծառայությունների մատուցման պայմանագրերով նախատեսված հատուցման ընդհանուր գումարը կբաշխվի բոլոր մատուցվող ծառայություններին՝ ելնելով վերջիններիս առանձին վաճառքի գներից: Առանձին վաճառքի գները կորոշվեն հիմք ընդունելով գնացուցակի գները, որոնցով Խումբը վաճառում է ծառայություններն առանձին գործարքների շրջանակներում:

Խմբի գնահատմամբ ծառայությունների իրական արժեքները և առանձին վաճառքի գներն ընդհանուր առմամբ համապատասխանում են միմյանց: Այդ իսկ պատճառով, Խումբը չի ակնկալում, որ ՖՀՄՍ 15-ի կիրառումը կհանգեցնի էական տարբերությունների այս ծառայություններից ստացվող հասույթի ճանաչման ժամկետներում:

(ii) Անցումը նոր ստանդարտին

Խումբը պլանավորում է կիրառել ՖՀՄՍ 15-ը օգտագործելով կումուլյատիվ ազդեցության մեթոդը՝ ճանաչելով ստանդարտի սկզբնական կիրառման ազդեցությունը սկզբնական կիրառման ամսաթվին (այսինքն՝ 2018թ. հունվարի 1-ին): Արդյունքում, Խումբը չի կիրառի ՖՀՄՍ 15-ի պահանջները ֆինանսական հաշվետվություններում ներկայացվող համադրելի ժամանակաշրջանի համար:

(գ) ՖՀՄՍ 16 «Վարձակալություն»

ՖՀՄՍ 16-ը փոխարինում է ՀՀՄՍ 17 «Վարձակալություն», ՖՀՄՍԿ մեկնաբանություն 4 «Համաձայնություններում վարձակալության առկայության որոշում», ՄՄԿ մեկնաբանություն 15 «Գործառնական վարձակալություն. խրախուսող պայմաններ» և ՄՄԿ մեկնաբանություն 27 «Վարձակալության իրավական ձև ներառող գործարքների բովանդակության գնահատումը» սահմանված վարձակալության հաշվառման ուղեցույցները:

ՖՀՄՍ 16-ը կգործի 2019թ. հունվարի 1-ին կամ հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար և կարող է կիրառվել ժամանակից շուտ՝ նաև ՖՀՄՍ 15-ը ՖՀՄՍ 16-ի սկզբնական կիրառման ամսաթվին կամ դրանից առաջ կիրառելու պայմանով:

ՖՀՄՍ 16-ը սահմանում է մեկ՝ հաշվեկշռային հաշվառման մոդել վարձակալության համար: Վարձակալը ճանաչում օգտագործման իրավունք հանդիսացող ակտիվը, որն իրենից ներկայացնում է էլեկտային ակտիվն օգտագործելու իրավունք, և վարձակալության գծով պարտավորությունը, որն իրենից ներկայացնում է վարձավճարների վճարման պարտականություն: Նախատեսված են բացառություններ կարճաժամկետ վարձակալության և ցածր արժեք ունեցող միավորների վարձակալության համար: Վարձատուի համար հաշվառման ներկայիս մոտեցումը չի փոփոխվում, վարձատուն շարունակում է դասակարգել վարձակալությունը ֆինանսական և գործառնական դասերի:

Խումբն ավարտել է իր ֆինանսական հաշվետվությունների վրա ՖՀՄՍ 16-ի կիրառման հնարավոր ազդեցության նախնական գնահատումը, սակայն դեռ չի ավարտել մանրամասն գնահատումը: Համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա ՖՀՄՍ 16-ի փաստացի ազդեցությունը սկզբնական կիրառման ժամանակաշրջանում կախված կլինի սպառա տնտեսական պայմաններից, այդ թվում՝ Խմբի փոխառության դրույքից 2019թ. հունվարի 1-ի դրությամբ և Խմբի ամենավերջին գնահատումից, թե արդյոք այն կօգտվի վարձակալությունը երկարաձգելու հնարավորություններից:

Ներկա պահին բացահայտված առավել էական ազդեցությունը կայանում է նրանում, որ Խումբը կճանաչի նոր ակտիվներ և պարտավորություններ գրասենյակի տարածքի գործառնական վարձակալության գծով:

Բացի այդ, կփոխվի վարձակալության այդ պայմանագրերի գծով ճանաչվող ծախսերի բնույթը, քանի որ ՖՀՄՍ 16-ի համաձայն, գծային հիմունքով ճանաչվող գործառնական վարձակալության ծախսերի փոխարեն Խումբը պետք է արտացոլի ակտիվից օգտվելու իրավունքի մաշվածության գծով ծախսերը և վարձակալության գծով պարտավորությունների տոկոսային ծախսերը:

(i) Անցումը նոր ստանդարտին

Որպես վարձակալ Խումբը կարող է՝

- կիրառել ստանդարտը հետընթաց, կամ
- կիրառել ձևափոխված հետընթաց մոտեցում՝ գործնական բնույթի ոչ պարտադիր պարզեցումներով:

Վարձակալը պետք է կիրառի ընտրված մոտեցումը հետևողականորեն իր բոլոր վարձակալության պայմանագրերի համար:

Խումբը պլանավորում է ՖՀՄՄ 16-ի սկզբնական կիրառումը 2019թ. հունվարի 1-ին՝ կիրառելով ձևափոխված հետընթաց մոտեցումը: Հետևաբար, ՖՀՄՄ 16-ի կիրառման կումուլյատիվ ազդեցությունը կճանաչվի որպես չբաշխված շահույթի տարեսկզբի մնացորդի ճշգրտում 2019թ. հունվարի 1-ին՝ առանց համադրելի տվյալների վերահաշվարկի:

Նախկինում ՖՀՄՄ 17-ի համաձայն որպես գործառնական վարձակալություն դասված պայմանագրերի նկատմամբ ձևափոխված հետընթաց մոտեցումը կիրառելիս՝ վարձակալը կարող էր ընտրել, արդյոք անհրաժեշտ է անցման ժամանակ կիրառել գործնական բնույթի ոչ պարտադիր պարզեցումները: Խումբը ներկայումս գնահատում է այս գործնական բնույթի ոչ պարտադիր պարզեցումների կիրառման հնարավոր ազդեցությունը:

Խմբից չի պահանջվում կատարել ճշգրտումներ վարձակալության այն պայմանագրերի գծով, որոնց շրջանակներում այն հանդես է գալիս որպես վարձատու, բացառությամբ այն դեպքերի, երբ այն հանդես է գալիս որպես միջանկյալ վարձատու ենթավարձակալության շրջանակներում: